Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ 2014/2015 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը հայտարարում է պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), տարկետման իրավունքով (**առաջին փուլ),** և առանց տարկետման իրավունքի բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ (վճարովի), առանց պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքի (**երկրորդ փուլ),** առկա ուսուցմամբ մագիստրոսի կրթական ծրագրով 2014/2015 ուսումնական տարվա ընդունելություն հետևյալ մասնագիտությունների և մասնագիտացումների գծով.

Մասնագիտութ-յան ծածկա-գիրը	Մասնագիտության անվանումը	Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ /անվճար/				Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ՝ առանց տարկետման իրավունքի/ վճարովի/	Ուսման վարձը
		Ընդա-մենը	Առանց տարկետման իրավունքի		Տարկետման իրավունքով		
			Ընդամենը	Այդ թվում՝ ԲՁ			
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**
080100	Տնտեսագիտության տեսություն	8	7	1	1	12	520.000
080200	Կառավարում մասնագիտու-թյան մասնագիտացումներ՝ պետական և մունիցիպալ կառավարում, հակաճգնաժա-մային կառավարում, զբոսա-շրջության կառավարում, գործարար կառա-վարում, նա-	28	27	-	1	92	620.000

	խագծերի կառա-վարում, սոցիալական կառա-վարում, կրթության կառավարում						
080300	Ֆինանսներ (այդ թվում՝ ար-ժեթղթերի շուկայի վերլուծութ-յուն և կառավարում, մաքսային վարչարարություն, հարկային վարչարարություն, պետական եկամուտների վերլուծություն և կանխատեսում, բանկային գործունեության կազմակերպում, կոլեկտիվ ներդրու-մային համակարգերի կառավարում)	32	29	-	3	103	620.000
080303	Հարկաբյուջետային իրավունք	-	-	-	-	10	520.000
080400	Կոմերցիա (այդ թվում՝ բիզնեսի կազմակերպում)	8	8	-	-	22	520.000
080500	Վիճակագրություն	3	3	-	-	12	520.000
080600	Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում մասնագիտության մասնագիտացումներ՝ ձեռնար-կատի-րական գործունեության կազմակերպում և կառավարում,	8	8	1	-	22	520.000

	տրանսպորտային ձեռնարկու-թյունների տնտեսագիտություն և կառավարում, արտադրական ձեռնարկությունների տնտե-սագիտություն և կառավարում						
080700	Միջազգային տնտեսական հարաբերություններ մասնագի-տության մասնագիտացումներ՝ արտաքին առևտրային քաղա-քականություն, միջազգային արժութաֆինանսական հարաբե-րություններ	9	8	1	1	21	570.000
080800	Մակրոտնտեսական քաղաքականություն և կանխատեսում (այդ թվում՝ մակրոտնտեսական վերլուծություն)	6	3	-	3	24	520.000
080900	Աշխատանքի տնտեսագիտություն (այդ թվում՝ աշխատանքի և աշխատավարձի կազմակերպումը ծառայությունների ոլորտում)	7	6	1	1	8	520.000
080901	Աշխատանքային իրավունք	-	-	-	-	10	520.000
081000	Բնօգտագործման տնտեսագիտություն մասնագիտության մասնագիտացումներ՝ տնտեսական	4	3	-	1	26	520.000

	գործունեության բնապահպանական փորձաքննություն, Ջրային ռեսուրսների և ջրային համա-կարգերի կառավարում)						
081200	Հողագույքային հարաբերություններ մասնագիտության մասնագիտացումներ՝ անշարժ գույքի գնահատում, պետական գույքի կառավարում	3	2	-	1	27	520.000
081100	Մաթեմատիկական մեթոդներ և մոդելները տնտեսագիտության մեջ	6	3	-	3	14	520.000
081300	Կառավարման տեղեկատվական համակարգեր (այդ թվում՝ Էլեկտրոնային բիզնես)	6	4	-	2	24	520.000
081400	Ապահովագրական գործ	5	3	-	2	10	570.000
081500	Հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի) (այդ թվում՝ աուդիտ)	17	17	1	-	23	570.000
081600	Ապրանքագիտություն և ապրանքների որակի փոր-ձաքննություն մասնագիտու-թյան մասնագիտացումներ՝ Պարենային ապրանքների ապ-րանքագիտություն և ապրանքների որակի	4	4	-	-	16	520.000

	փորձաքննություն, ոչ պարենային ապրանքների ապրանքագիտությունն և ապ-րանքների որակի փորձաքննություն)						
081700	Շուկայաբանություն (մարքեթինգ) մասնագիտու-թյան մասնագիտացումներ՝ Մարքեթինգային հետազոտություններ, Մարքեթինգային հաղորդակցությունները)	6	6	1	-	24	570.000
	Ընդամենը	160		6	19	500	

Ա. Ընդունելության առաջին փուլին կարող են մասնակցել միայն ՀՊՏՀ բակալավրիատի 2013/2014 ուսումնական տարվա համապատասխան մասնագիտության կամ մասնագիտացման շրջանավարտները: Մագիստրատուրայի ընդունելությունն անցկացվում է ըստ մասնագիտությունների ՀՀ կառավարության կողմից հաստատված պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), տարկետման իրավունքով և առանց տարկետման իրավունքի ուսուցման տեղերի:

Առաջին փուլի համար փաստաթղթերն ընդունվում են ս/թ **հունիսի 1-ից 6-ը ներառյալ**: Դիմումին կից ներկայացվում են՝

1. 3 x 4 սմ չափսի երեք լուսանկար
2. անձը հաստատող փաստաթուղթ:

Բ. Ընդունելության երկրորդ փուլին կարող են մասնակցել ինչպես ՀՊՏՀ մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի կամ բակալավրի, այնպես էլ պետական և հավատարմագրված ոչ պետական այլ բուհերի մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի կամ բակալավրի դիպլոմ ունեցող շրջանավարտները: Երկրորդ փուլով մագիստրատուրայի ընդունելությունն անցկացվում է ըստ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման /վճարովի/, առանց պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքի ուսուցման տեղերի: **Երկրորդ փուլի** համար փաստաթղթերն ընդունվում են **ս/թ հունիսի**

15-ից օգոստոսի 26-ը ներառյալ, իսկ շեմային քննությունները կկազմակերպվեն ս/թ օգոստոսի 28-ին և 29-ին: Դիմումին կից ներկայացվում են՝

1. պետական բուհի կողմից տրված վկայագրի (դիպլոմի) և առաջադիմության թերթիկի բնօրինակը և պատճենները,/կամ շրջանավարտի անձնական քարտի դեկանատի կողմից տրված պատճենը,
2. 3 x 4 սմ չափսի երեք լուսանկար,
3. աշխատող քաղաքացիները՝ տեղեկանք աշխատանքի վայրից:

Գ. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում տնտեսագետ-իրավաբան դուալ մասնագիտական որակավորմամբ մագիստրոսներ պատրաստելու նպատակով կատարվում է ընդունելություն «Հարկաբյուջետային իրավունք» և «Աշխատանքային իրավունք» մասնագիտացումների գծով: Նշված մասնագիտացումների գծով մագիստրատուրա կարող են ընդունվել պետական և հավատարմագրված ոչ պետական բուհերի տնտեսագիտական կամ իրավաբանական մասնագիտություններով մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի կամ բակալավրի դիպլոմ ունեցողները: Տնտեսագետ դիմորդները շեմային քննություն են հանձնում «Պետության և իրավունքի տեսություն», իսկ իրավաբան դիմորդները՝ «Տնտեսագիտություն» առարկայից:

Մագիստրատուրա ընդունվելու համար ՀՊՏՀ հարակից մասնագիտությամբ բակալավրիատի շրջանավարտները, մագիստրոսները և դիպլոմավորված մասնագետները, ինչպես նաև այլ բուհերից դիմողները շեմային քննություն են հանձնում համապատասխան մասնագիտության բակալավրիատի ամփոփիչ քննության հարցաշարերով:

Շեմային քննությունից դրական գնահատական ստացած դիմորդները իրավունք են ստանում մասնակցելու մագիստրատուրայի ընդունելության մրցույթին:

Դ. Բանակից զորացրված դիմորդները բացի նշված փաստաթղթերից ներկայացնում են.

1. զինվորական գրքույկ
2. տեղեկանք զինկոմիսարիատից՝ զորացրման վերաբերյալ:

Դիմորդների գործերն ընդունվում են ՀՊՏՀ-ում՝ Երևան, Նալբանդյան 128 հասցեով, իսկ Գյումրում և Եղեգնաձորում՝ մասնաճյուղերի ընդունող հանձնաժողովներում:

Մանրամասն տեղեկությունների համար այցելել www.asue.am պաշտոնական կայք կամ զանգահարել 593-473 հեռախոսահամարով՝ ՀՊՏՀ ընդունող հանձնաժողով: